ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԻՄԱԽՈՍԻ

Անդրանիկ Տիգրանի Շահինյանի՝ «*Աշխատանքային միգրացիան որպես երիտասարդների մասնագիտական և սոցիալական կայացման փորձ (Շիրակի մարզի օրինակով)*» թեմայով, ներկայացված

ԻԲ-00.01-«Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

1. Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ատենախոսությունում գիտական պատշաճ վերլուծության է առնված ժամանակակից հայաստանյան հասարակության սոցիալական զարգացման տեսանկյունից առավել արդիական և բազմաշերտ հիմնախնդիրներից մեկը՝ երիտասարդների աշխատանքային միգրացիան և դրա ազդեցությունը երիտասարդության մասնագիտական, սոցիալական և անձնային կայացման գործընթացների վրա:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջին տասնամյակներում աշխատանքային միգրացիան վերածվել է ոչ միայն ժողովրդագրական և տնտեսական, այլև սոցիալական կառուցվածքի, մարդկային կապիտալի վերարտադրության, սոցիալական շարժունակության և ինքնության ձևավորման վրա էական ազդեցություն ունեցող գործընթացի: Հայաստանի Հանրապետությունում, մասնավորապես Շիրակի մարզում, երիտասարդական միգրացիան կրում է համակարգային բնույթ՝ պայմանավորելով տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման մի շարք հիմնախնդիրներ:

Հատկանշական է, որ հեղինակն աշխատանքային միգրացիան դիտարկում է ոչ միայն տնտեսական պատճառահետևանքային տրամաբանության շրջանակում, այլև

որպես սոցիալական փորձառություն, որն ազդում է երիտասարդների մասնագիտական ինքնահաստատման, սոցիալականացման, արժեքային կողմնորոշումների, սոցիալական կապիտալի և ապագայի ռազմավարությունների ձևավորման վրա: Նման մոտեցումը էապես ընդլայնում է միգրացիոն գործընթացների սոցիոլոգիական ըմբռնման շրջանակները:

Ատենախոսության արդիականությունը առավել ընդգծվում է նաև վերջին տարիների ճգնաժամային զարգացումների համատեքստում՝ COVID-19 համավարակ, պատերազմական իրադարձություններ, Արցախահայության բռնի տեղահանում, սոցիալ-տնտեսական անկայունություն, որոնք նոր ազդակներ են հաղորդել երիտասարդների միգրացիոն տրամադրություններին և խորացրել սոցիալական անորոշության մակարդակը:

Հեղինակի կողմից իրականացված վերլուծությունն նշանակալից նյութ է առաջարկում ոչ միայն ՀՀ-ում միգրացիոն գործընթացների սոցիալ-տարածական պրակտիկաների ուսումնասիրման և տեսական հայեցակարգման տեսանկյունից, այլև գործնական՝ քաղաքականությունների մշակման և արդյունավետ իրագործման տեսանկյունից:

2. Ատենախոսության նպատակը և խնդիրները

Ատենախոսության հիմնական նպատակն է համակարգային սոցիոլոգիական վերլուծության ենթարկել աշխատանքային միգրացիայի ազդեցությունը երիտասարդության սոցիալ-մասնագիտական տրանսֆորմացիաների վրա և բացահայտել միգրացիոն փորձառության դերը Շիրակի մարզի երիտասարդների ինքնահաստատման և սոցիալական կայացման գործընթացում: Վերոհիշյալ նպատակից բխող խնդիրների շարքում սահմանվել են՝

- երիտասարդների աշխատանքային միգրացիային առնչվող տեսական մոտեցումների և գիտական հայեցակարգերի վերլուծությունը,
- երիտասարդական միջազգային միգրացիայի էության, տեսակների և դրսևորման ձևերի ուսումնասիրությունը,

- երիտասարդ աշխատանքային միգրանտների սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկությունների բացահայտումը,
- միգրացիոն վարքի ձևավորման սոցիալ-տնտեսական և սոցիալ-մշակութային գործոնների վերլուծությունը,
- ՀՀ միգրացիոն քաղաքականության հիմնախնդիրների և զարգացման հեռանկարների ուսումնասիրությունը,
- միգրացիայի ազդեցության գնահատումը ինքնության, ընտանիքի մոդելի և սոցիալականացման գործընթացների վրա,
- 2021–2024 թվականների միգրացիոն տեղաշարժերի սոցիոլոգիական գնահատումը:

3. Հետազոտության արդյունքները և ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է մի շարք տեսական և կիրառական նշանակություն ունեցող արդյունքներով՝

- Իրականացված է 2021–2024 թվականների ճգնաժամային զարգացումներով պայմանավորված երիտասարդների միգրացիոն միտումների սոցիոլոգիական գնահատում,
- Բացահայտված են աշխատանքային միգրացիայի և հետագայում բարձր վարձատրվող աշխատանքի ձեռքբերման միջև առկա փոխկապակցվածությունները,
- Իրականացված է մասնագիտական ինքնաիրացման խնդիրներով պայմանավորված միգրացիոն վարքի որակական վերլուծություն,
- Ներկայացված են երիտասարդների կողմից նախընտրելի միգրացիոն ուղղությունները և դրանք պայմանավորող սոցիալական գործոնները,
- Ուսումնասիրված են աշխատանքային միգրացիայի դրական և բացասական ազդեցությունները երիտասարդների սոցիալական զարգացման, ընտանիքի ձևավորման, սոցիալական շարժունության և վերասոցիալականացման գործընթացների վրա,

- Փորձագիտական հարձազրույցների միջոցով բացահայտված են միգրացիոն քաղաքականության և աշխատանքային միգրանտների սոցիալական պաշտպանության համակարգի մի շարք հիմնախնդիրներ:

Աշխատանքի կարևոր առավելություններից է նաև այն, որ հեղինակին հաջողվել է համադրել միգրացիայի մակրոսոցիալական և միկրոսոցիալական վերլուծության մակարդակները՝ տեսական և էմպիրիկ հենքի վրա ներկայացնելով երիտասարդների միգրացիոն փորձառության սոցիոլոգիական մեկնաբանությունը:

Ատենախոսությունում կիրառվել են ինչպես քանակական, այնպես էլ որակական հետազոտական մեթոդներ, ներառյալ՝ սոցիոլոգիական հարցում, ֆոկուս-խմբային քննարկումներ, փորձագիտական հարցազրույցներ, կոռելյացիոն և ռեգրեսիոն վերլուծություններ, ինչը բարձրացնում է հետազոտության գիտական արժանիքը և արդյունքների հավաստիությունը:

4. Ատենախոսության արդյունքների գործնական և գիտական նշանակությունը

Ատենախոսությունն ունի գիտական և կիրառական նշանակություն, քանի որ ստացված արդյունքները կարող են նպաստել ինչպես պետական քաղաքականության ոլորտում արդյունավետ որոշումների ընդունմանը՝ ՀՀ պետական կառավարման և ՏԻՄ մարմինների կողմից՝ միգրացիոն քաղաքականության և երիտասարդության զարգացման ծրագրերի մշակման, երիտասարդական և զբաղվածության ծրագրերի իրականացման ընթացքում, մարզային քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար՝ երիտասարդների ինքնահաստատման և սոցիալական կայացման մեխանիզմների զարգացմանը նպաստելու նպատակով, այնպես էլ ապագա գիտական հետազոտությունների իրականացման համար տեսամեթոդաբանական հենք հանդիսանալ:

Տեսական առումով աշխատանքը նպաստում է երիտասարդական միգրացիայի սոցիոլոգիական ուսումնասիրությունների զարգացմանը, ինչպես նաև միգրացիոն գործընթացների սոցիալական մեխանիզմների, սոցիալական

շարժունության և մարդկային կապիտալի վերարտադրության վերաբերյալ գիտական պատկերացումների խորացմանը:

Ատենախոսության տեսական հատվածը կարող է օգտակար լինել ոլորտին վերաբերող ուսումնակրթական ձեռնարկների և դասընթացների մշակման ընթացքում:

5. Ատենախոսության կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը ծավալուն է՝ 206 տպագիր էջ և պարունակում է տեսական և էմպիրիկ նյութ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, տասներկու ենթագլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Տրվում են, նաև հինգ հավելվածներ: Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության թեմայի գիտական ուսումնասիրվածության աստիճանը, ամփոփվել են ատենախոսության տեսամեթոդաբանական հիմքերը, ներկայացվել է հետազոտության գիտական նորույթը:

Ատենախոսության ***առաջին գլխում*** («ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ») ներկայացված են աշխատուժի միջազգային միգրացիայի արդի տեսություններն ու հայեցակարգերը, երիտասարդների միջազգային միգրացիայի էությունը, տեսակները և դրսևորման ձևերը, ՀՀ երիտասարդ աշխատանքային - միգրանտների սոցիալական և էթնոժողովրդագրական բնութագիրը, ՀՀ արտաքին միգրացիայի վերաբերյալ օրենսդրական դաշտի յուրահատկությունների և վիճակագրական տվյալների վերլուծությունը:

Ատենախոսության ***երկրորդ գլխում՝*** «ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ» վերնագրով, ներկայացված են սոցիոլոգիական հետազոտության ծրագրի կառուցվածքը և ընտրանքի սկզբունքները, կոռելյացիոն և ռեգրեսիոն մեթոդների կիրառման տեսական և կիրառական առանձնահատկությունները, որակական հետազոտության մեթոդաբանությունը, տեղեկատվության հավաքագրումն ու մշակումը:

Ատենախոսության *երրորդ գլուխը*, որը վերնագրված է «ՍՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ» նվիրված է պոտենցիալ միգրանտների հետազոտության արդյունքների վերլուծությանը, որակական հետազոտության և փորձագետների հարցման տվյալների ներկայացմանն ու փորձագիտական հարցման և ֆոկուս խմբային քննարկման արդյունքների վերլուծությանը:

Ատենախոսության եզրակացության բաժնում ներկայացված են կատարված հետազոտություններից ստացված եզրակացությունները և առաջարկությունները: Աշխատանքը եզրափակվում է օգտագործված գրականության ցանկով և 5 հավելվածներով:

6. Դիտողություններ և առաջարկություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսական աշխատանքը զերծ չէ թերություններից թե՛ ձևական, թե բովանդակային տեսանկյունից՝

1. Ատենախոսության կառուցվածքն ու գլուխների ձևակերպման տրամաբանությունը քննարկման տեղիք են տալիս («Բովանդակություն», էջ 3): Ատենախոսությունը մեծապես կշահեր բովանդակության տեսանկյունից և կառուցվածքային առումով առավել ամբողջական և ակադեմիական տեսք կունենար, եթե աշխատանքի բոլոր գլուխներն ու ենթագլուխները բովանդակային առումով առավել հստակ, վերլուծական և գիտական տրամաբանություն արտացոլող վերնագրեր ունենային, ինչպես նաև պահպանվեր գլուխների ձևակերպման միասնական սկզբունքը:

Մասնավորապես, աշխատանքում միայն առաջին գլուխն ունի բովանդակային և գիտական առումով հստակ ձևակերպված վերնագիր՝ «Աշխատանքային միգրացիայի տեսությունները և երիտասարդական միգրացիայի առանձնահատկությունները ՀՀ-ում», մինչդեռ հաջորդ գլուխները ներկայացված են առավելապես տեխնիկական ձևաչափով՝ պարզապես որպես «ԳԼՈՒԽ Բ. Սոցիոլոգիական հետազոտության մեթոդաբանությունը» և «ԳԼՈՒԽ Գ. Ստացված արդյունքների վերլուծություն»:

Նման կառուցվածքային մոտեցումը թուլացնում է աշխատանքի ընդհանուր գիտական և բովանդակային ամբողջականության ընկալումը, քանի որ գլուխների վերնագրերը լիարժեք չեն արտացոլում դրանց բովանդակային և վերլուծական

տրամաբանությունը: Թեպետ որոշ ենթաբաժիններ ձևակերպված են որպես մեթոդաբանական նկարագրություններ, մյուսները՝ որպես վերլուծական բաժիններ, սակայն այս ձևաչափն էլ է աշխատանքում պարբերաբար խախտվում, ինչը հանգեցնում է բովանդակային շփոթության և տեղեկատվության կրկնության (օրինակ՝ Գլուխ Բ-ում, որը վերնագրված է որպես «Սոցիոլոգիական հետազոտության մեթոդաբանությունը», Բ4 ենթաբաժնում «Տեղեկատվության հավաքագրումն ու մշակումը» վերնագրի ներքո՝ էջեր 126-140, տեղ է գտել քանակական հարցման արդյունքների ներկայացումը):

2. Ատենախոսության առաջին գլուխը՝ «Աշխատանքային միգրացիայի տեսությունները և երիտասարդական միգրացիայի առանձնահատկությունները ՀՀ-ում», էջեր 18-95, կառուցվածքային և հայեցակարգային առումով չի ձևավորվում որպես միասնական տեսական վերլուծություն, որը պետք է ծառայի հետազոտության մեթոդաբանության և հետագա էմպիրիկ ուսումնասիրության գիտական հիմնավորմանը: Գլխի ենթաբաժինների միջև բացակայում է հստակ ներքին տրամաբանական հաջորդականությունն ու հայեցակարգային փոխկապակցվածությունը:

Փաստացի ատենախոսության տեսական հատվածն ընկալվում է որպես տարբեր բնույթի նյութերի հաջորդական համադրում, քան որպես միասնական տեսական վերլուծություն: Աշխատանքը տեսական և կառուցվածքային առումով էապես կշահեր, եթե առաջին գլուխը կառուցվեր միասնական սոցիոլոգիական հայեցակարգի շուրջ, որտեղ ներկայացված տեսական մոտեցումները կդառնային հետազոտական հարցերի, վարկածների և մեթոդաբանական ընտրության հստակ հիմնավորում, եթե տեսական հայեցակարգերը դասակարգվեին ոչ միայն ժամանակագրական հենքով, այլ, օրինակ, նաև՝

- մակրո/միկրո մակարդակների,
- կառուցվածքային/գործոնային մոտեցումների,
- տնտեսական/սոցիոլոգիական/մշակութային հարացույցերի շրջանակում:

3. Ատենախոսության առանցքային հասկացություններից մեկը՝ «սոցիալական կայացումը» աշխատանքում, ըստ էության, սահմանված չէ, ավելին՝ այն աշխատանքի

տարբեր հատվածներում կիրառվում է բազմաբնույթ իմաստային շեշտադրումներով, սակայն հեղինակը բավարար չափով չի ներկայացնում դրա հստակ օպերացիոնալիզացիան:

Անհստակ է մնում, թե սոցիալական կայացումը կոնկրետ ինչ չափանիշներով է չափվում հետազոտության ընթացքում, որոնք են դրա ցուցիչները՝

- սոցիալական կարգավիճակը,
- մասնագիտական ինքնաիրացումը,
- տնտեսական անկախությունը,
- սոցիալական ինտեգրումը,
- թե՞ արժեքային և ինքնության փոփոխությունները:

Աշխատանքում մի շարք հատվածներում խոսվում է աշխատանքային միգրացիայի դրական ազդեցությունների մասին՝ կապված վերոնշյալ գործոնների հետ, սակայն բավարար չափով չի հստակեցվում, թե ինչ չափանիշներով է գնահատվում միգրացիայի «հաջողությունը» որպես «սոցիալական կայացման» գործոն:

Այս չափորոշիչների հստակ սահմանումը թույլ կտար առավել ամբողջական գնահատել միգրացիայի ազդեցությունը երիտասարդների կյանքի ռազմավարությունների վրա:

4. Ատենախոսությունում անդրադարձ կա ընտանիքի, համայնքի և սոցիալական միջավայրի ազդեցությանը, սակայն սոցիալական կապիտալի խնդիրը չի վերածվում առանձին վերլուծական առանցքի:

Մինչդեռ երիտասարդների միգրացիոն վարքում էական դեր ունեն՝ բարեկամական և ընկերական ցանցերը, համայնքային աջակցությունը, արտերկրում ձևավորված միգրացիոն կապերը, վստահության և փոխօգնության մեխանիզմները և այլն:

Առավել ևս, որ երիտասարդ միգրանտների դեպքում հաճախ ձևավորվում են տրանսազգային սոցիալական դաշտեր, որտեղ անձինք միաժամանակ ներգրավված են թե՛ հայրենի, թե՛ ընդունող հասարակությունների սոցիալական, տնտեսական և մշակութային հարաբերություններում (իդեպ՝ աշխատանքում հեղինակը

համեմատաբար քիչ ուշադրություն է դարձվում տրանսազգային միգրացիայի ժամանակակից հայեցակարգերին)։

Այս մոտեցման կիրառումը հնարավորություն կտար առավել խորությամբ վերլուծել՝

- հայկական սփյուռքի հետ կապերը,
- դրամական փոխանցումների սոցիալական նշանակությունը,
- բազմակի ինքնությունները,
- ինչպես նաև վերադարձի և կրկնակի միգրացիայի ռազմավարությունները։

Այս գործոնների առավել խորքային ուսումնասիրությունը կօգներ բացահայտել միգրացիայի վերարտադրության սոցիալական մեխանիզմները։

5. Ատենախոսությունում «երիտասարդներ» հասկացությունը կիրառվում է որպես հիմնական հետազոտական կատեգորիա, սակայն աշխատանքի շրջանակում հստակ չի ներկայացվում, թե կոնկրետ որ տարիքային խմբերն են ներառվել և ինչ հիմնավորմամբ։

Նպատակահարմար կլիներ ավելի հստակ հիմնավորել ընտրված տարիքային շեմերը և ցույց տալ, թե ինչպես են տարիքային խմբերը տարբերվում միգրացիոն վարքի, մասնագիտական ռազմավարությունների և սոցիալական սպասումների տեսանկյունից։

«Երիտասարդներդներ» հասկացության հստակ սահմանումը, հատկապես տարիքային շեմի կոնկրետացումը թույլ կտար՝ համադրելի դարձնել հետազոտության արդյունքում ստացված տվյալները, ինչն այս աշխատանքի շրջանում ապահովված չէ, քանի որ քանակական հետազոտությունն իրականացվել է ՀՀ Շիրակի մարզի քաղաքային և գյուղական բնակավայրերի 13-35 տարեկան երիտասարդների շրջանում, իսկ, օրինակ ֆոկուս-խմբային քննարկումները 25-30 տարեկան երիտասարդների շրջանում։

6. Ատենախոսության մեթոդաբանական հատվածը նույնպես որոշակի խնդիրներ ունի։

Հեղինակը նշում է աշխատանքում խառը մեթոդաբանության (mixed methods) կիրառման մասին, սակայն քանակական և որակական տվյալների ինտեգրումը լիարժեք չի իրականացվում:

Թեև առանձին-առանձին ներկայացված են սոցիոլոգիական հարցման, ֆոկուս-խմբային քննարկման և փորձագիտական հարցումների արդյունքները, այնուամենայնիվ, դրանց միջև վերլուծական «խաչաձևման» տրիանգուլյացիայի մեխանիզմը բավարար չափով չի բացահայտվում:

Անորոշ է մնում, թե՝ ինչպես են որակական տվյալները հաստատում կամ իմաստավորում քանակական արդյունքները, ինչ հակասություններ կամ համընկնումներ են արձանագրվել, ինչպես են տարբեր մեթոդներով ստացված տվյալները համադրվել միասնական սոցիոլոգիական եզրակացությունների շրջանակում:

Նշված մեթոդներով ստացված տեղեկատվությունն ավելի շատ ներկայավում է որպես տվյալների մեխանիկական համադրություն, քան ինտեգրված հետազոտական ռազմավարության արդյունքում իրականացված համալիր վերլուծություն:

7. Ֆոկուս-խմբային հետազոտության մեթոդաբանությունը ևս որոշակի հարցադրումների տեղիք է տալիս: Թեպետ աշխատությունում մի քանի անգամ նշվում է, որ իրականացվել են երկու ֆոկուս-խմբային քննարկումներ (էջեր 105-109)՝ 22 մասնակցի ներգրավմամբ, որոնց ընտրությունը կատարվել է նախապես սահմանված չափանիշների հիման վրա՝ տարիքային համապատասխանություն (25–30 տարեկան), միգրացիոն փորձառության առկայություն և Գյումրի համայնքի հետ կապ ունենալը: Սակայն աշխատանքի մեջ չի ներկայացվում մասնակիցների գենդերային բաշխումը, մինչդեռ գենդերային գործոնը ոչ միայն սոցիոլոգիական տեսանկյունից կարևոր փոփոխական է երիտասարդների միգրացիայի ուսումնասիրության պարագայում, այլև այն որպես կարևոր փոփոխական նշվում է հեղինակի կողմից առաջադրված վարկածներից մեկում (էջ 98):

Ատենախոսությունում բավարար չափով մեթոդաբանորեն հիմնավորված չէ, թե ինչու է իրականացվել հենց երկու ֆոկուս-խմբային քննարկում և ինչ գիտական

տրամաբանությամբ է պայմանավորված դրանց քանակական սահմանափակումը, հստակեցված չէ, թե արդյոք ֆոկուս-խմբային հետազոտության ընթացքում ապահովվել է տվյալների հագեցվածության սկզբունքը:

Միևնույն ժամանակ, ֆոկուս-խմբային քննարկումների արդյունքները հիմնականում ներկայացվում են նկարագրական ձևով՝ որպես մասնակիցների կողմից տրված պատասխանների վերարտադրում այս կամ այն հարցի շրջանակում, առանց դրանց խորքային սոցիոլոգիական մեկնաբանության և վերլուծության:

Աշխատությունում բացակայում են ֆոկուս-խմբային հետազոտություններից ուղիղ մեջբերումները, որոնք հնարավորություն կտային ցույց տալ մասնակիցների խոսքային ռազմավարությունները, արժեքային դիրքորոշումները, ինքնության կառուցման առանձնահատկությունները և միգրացիոն փորձառությունների սուբյեկտիվ ընկալումները:

Հատկապես արժեքավոր կլիներ, եթե հեղինակը ներկայացներ՝ վերադարձած միգրանտների կենսափորձի անհատական պատմություններ, միգրացիայի արդյունքում ինքնության փոփոխության կոնկրետ օրինակներ, ընտանիքների ներսում սոցիալական դերերի վերափոխման դեպքեր, ինչպես նաև երիտասարդների ապագայի ռազմավարությունների խորքային վերլուծություն:

Սա հնարավորություն կտար առավել ամբողջական ներկայացնել միգրացիոն փորձառության սոցիալական և մշակութային կողմերը:

8. Ոչ բոլոր դեպքերում է լիարժեք պահպանվում փորձագիտական հետազոտություններին բնորոշ անանունության սկզբունքը. աշխատանքում երբեմն ներկայացվում են փորձագետների կոնկրետ ինստիտուցիոնալ և պաշտոնական բնութագրումներ (օրինակ՝ «ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի էթնոսոցիոլոգիայի բաժնի վարիչ», «ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Աշխատանքային միգրացիայի և մոնիթորինգի բաժնի պետ» (էջեր 150-151) և այլն), ինչը հնարավորություն է տալիս հստակ նույնականացնել մասնակիցներին: Փորձագիտական հարցազրույցների դեպքում ևս ստացված տվյալները ներկայացվում են որպես մասնակիցների կողմից տրված

պատասխանների վերարտադրում հերթականությամբ նշված հարցերի շուրջ, առանց համապատասխան սոցիոլոգիական մեկնաբանության և վերլուծության: Այստեղ նույնպես բացակայում են ուղիղ մեջբերումները:

9. Ատենախոսությունը գիտական և վերլուծական առումով էապես կշահեր, եթե թեկուզ սահմանափակ չափով իրականացվեր համեմատական անդրադարձ ՀՀ այլ մարզերի երիտասարդական միգրացիոն գործընթացներին և առանձնահատկություններին:

Մասնավորապես, Լոռու, Տավուշի կամ սահմանամերձ այլ մարզերի հետ համեմատական դիտարկումը հնարավորություն կտար առավել հստակ բացահայտել Շիրակի մարզի միգրացիոն վարքի յուրահատկությունները, սոցիալական համատեքստը և տարածաշրջանային տարբերությունների ազդեցությունը երիտասարդների միգրացիոն տրամադրությունների վրա:

10. Աշխատանքում առկա են առանձին խմբագրական բնույթի թերություններ (տերմինաբանական և ձևակերպումների որոշ անհամաչափություններ), տեքստային հատվածների բազմաթիվ կրկնություններ, որոնք կարող էին շտկվել վերջնական խմբագրման փուլում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված թերությունները չեն նսեմացնում ատենախոսական աշխատանքի գիտական արժեքը և վերջինիս դրական գնահատականը:

Ատենախոսի կողմից հրատարակված աշխատություններն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են գիտական ամսագրերում հեղինակի հրապարակած 11 գիտական հոդվածներում և մեկ ուսումնամեթոդական ձեռնարկում: Սեղմագիրն արտացոլում է աշխատանքի հիմնական բովանդակությունը և հեղինակի հիմնական ձեռքբերումները:

Ատենախոսության հիմնական արժանիքներից է ուսումնասիրվող բարդ հիմնախնդիրների վերլուծությունն ու դրանց զարգացման ներքին տրամաբանության բացահայտումը: Ատենախոսական աշխատանքում առաջ քաշված մեթոդաբանական և մեթոդական խնդիրները լուծված են:

Անդրանիկ Տիգրանի Շահինյանի՝ ***«Աշխատանքային միգրացիան որպես երիտասարդների մասնագիտական և սոցիալական կայացման փորձ (Շիրակի մարզի օրինակով)»*** թեմայով սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ավարտուն գիտահետազոտական աշխատանք է, որը վերաբերում է տեսամեթոդաբանական և գործնական առումով արդիական թեմայի: Թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջներին:

Ելնելով վերոշարադրյալից՝ գտնում եմ, որ ատենախոսության հեղինակ Ա.Տ. Շահինյանն արժանի է ԻԲ.00.01 - «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ, ս.գ.թ. Ն.Ա. Մելքոնյան

Տիկին Ն.Ա. Մելքոնյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ.

ԵՊՀ գիտական քարտուղար, բ.գ.թ. Մ.Վ. Հովհաննիսյան

15 մայիս 2026 թ.